

Ս. ՇԻՐԻՆ

*«Արմենիա»
Բնագրաբանական*

Ս Ր Ս Ր Ա Ն

(Ուսումնասիրութեան մի փորձ)

-----»»:::««-----

Ա. ՇԻՐԻՆ

Տ Ր Տ Ր Ա Ն

(Օպտը իզսլճովանի)

Բ Ա Կ Մ

Ոգրափիյա Ն. Ա. Զրիվանչովա.

1910

9(47-925)

Շ-64

9 42.925

06/06/2011

T-64

I.

9

Տնտեսական այն սոսկալի ճգնաժամը, որ պիտին տարիներից 'ի վեր մեր գիւղօրայքումն է թագաւորում, սովի այն ուրուականը, որը դամօկիւան սրի նման մեր գիւղացիները գլխին կախւած՝ ամեն ըսպէ նրա գոյութեանն է սպասնում, գիւղացիութեան այն ուժեղ հոսանքը, որը տեղի ունի գիւղօրայքից դէպի քաղաքները և որը օր օրի վրայ ուժգնանում և գործազուհիները մի սպառնալի քանակ է ստեղծում և վերջապէս կենցաղավարութեան այն թշուառ եղանակը, ինչպիսին մեր գիւղացիութեանն է յատուկ, անհրաժեշտօրէն հրապարակի վրայ են դնում իրբև այժմէական նշանակութիւն ունեցող և ամենահրատապ խնդիր, մեր գիւղացիների տնտեսական շրջութեան քընտութեան հարցը:

Եւ իրօք. մի եբկիր, որի ազգաբնակչութեան ամբողջ 70 տօկօսը և դեռ էլ աւելին գիւղացիութիւնն է, որը այսպէս թէ այնպէս կապւած է գիւղատնտեսական արդիւնարբութեան հետ—կրիտիքական մօմենտներ է անցկացնում, կիանքի և մահւան մէջ տարուբերելով: Եւ ինչպէս կարող է այդ տեսակի մի խնդիր ամենաառաջնակարգ տեղը չգրաւել հասարակութեան վերաբերեալ կենսական խնդիրների շարքում: Անուշադրութեան մասնել այդ օրինակի մի խնդիր, այդ կնշանակէ ամբողջ հասարակութեան շահերը անտես առնել, իր անձնական վէրքերի բժշկութիւնը ոտնահարել:

Ճիշտ է. մեր մէջ գոյութիւն ունեցող համարեա թէ բոլոր քաղաքական կուսակցութիւնները գրաւել են այդ խնդրով և գիւղացիութեանը ներկայ տագնապալից դրութիւնից հանելու նկատմամբ որոշ եզրակացութեան յանդել, բայց զբանից երկրի գրութիւնը

18463

նոյնն է մնացել, առանց մազաչափ անգամ առաջ շար-
ժեկու: Ինքնըստինքեան հասկանալի է, որ սօցիա-
լիստական կուսակցութիւնները իրանց սօցիալիզա-
ցիայով և մունիցիպալիզացիայով ներկայումս օգտա-
կար լինել, զիւղացիների արդի պահանջներին ձայ-
նակցել չէին կարող. իսկ կառավարութիւնը, այն կա-
ռավարութիւնը, որն իրա 2 միլիարդանոց բիւջէի ե-
րեք քառորդ մասը զիւղացիներից է գանձում, իր
համախոհ կուսակցութիւններով հանդերձ, մինչև օրս
ոչ մի գործնական քայլ չէ արել յօգուտ զիւղացիու-
թեան և վերջինս մնում է նոյն չարքաշ ու անօգնական
գրութեան մէջ նետուած, ինչ որ առաջ էր, մինչև մե-
ծագործք խոստումների շրջանը:

Ինչպէս իւրաքանչիւր մի երևոյթ, այնպէս էլ մեր
զիւղացիութեան արդի գրութիւնը ունի իր պատճառ-
ները: Եւ այդ երևոյթի էութիւնը կազմող պատճառ-
ները քննելու համար, ոչ թէ պէտք է յենել ընդհա-
նուր ստատիստիքական տեղեկութիւնների վրայ, ո-
րոնք խիստ հեռու են մեր երկրի մասին մեզ պարզ
հասկացողութիւնի տալուց, ոչ թէ պէտք է բաւական
անալ մեր երկրի տնտեսութեան ընդհանուր դէփիկտ-
ները երևան հանելով, այլ պէտք է սկսել ընտանիքից,
զիւղից և զիւղական համայնքներից, ու հետզհետէ մի-
այն լայնացնելով հետազօտութեան ասպարէզը, ամ-
բողջացնել մեր երկրի ուսումնասիրութեան գործը:
Այդ բէալ միջոցով միայն մենք կարող կլինենք, մեր
զիւղացիութեան ներկայ տնտեսական հիւանդոտ գը-
րութեան, ճշգրիտ զիւղանօղը դնելու:

Աշխատութեանս մէջ գտնուած ստատիստիքական
տեղեկութիւնները հաւաքել եմ 1907 թւականի ամառ-
այ ամիսների ընթացքում, այսինքն մի ժամանակա-
շրջանում, երբ սիսիանցիք դեռ չէին կաղզուրել հայ-
թուրքական ընդհարումներից կրած տնտեսական ծա-
նըր հարւածներից:

Ա. Շիրին

Ս Ի Ս Ի Ա Ն

(Ուսումնասիրութեան մի փորձ)

Զանգեզուր գաւառի հիւսիս-արևմտեան կողմում՝
Նախիջևանի, Շարուր-Դարայազեազի և Զուանշիրի
գաւառների սահմանագծերի արանքում, կաթսայաձև
կերպով տարածւած է Սիսիանը, կամ ինչպէս տեղա-
ցիներն են ստում «Սիսիանու մնալը», որը Զանգեզու-
րի գաւառի, Ա.-ին ոստիկանական շրջանի, խոշորագոյն
մասն է կազմում. նրա տարածութիւնը համուում է
մօտ 1783,35 քառակուսի վերստի կամ 185,765 դե-
սեատինի:

Սահմանագծի երեք կողմից էլ Սիսիանը շրջա-
պատւած է բարձրազիր լեռներով, որոնց մէջ նշանա-
ւոր են հետեւալները. հիւսիսային կողմից՝ Դըլը-բողազ
-դարի, 11,039'. Պերիչնպլ, 10,572'. Մուխորթօլիան
10, 627'. և Դաւազեօզի լեռները. արևմուտքից՝ Դըսը-
դազ, 9,834'. Բարլու, 10,000', Աղղարան և
Սալվարդ, 10,422', հարաւից՝ Արալին, 10,425', Դամիւր-
Դադ, 10, 093' և Գեազ-բէլ, 8,918'. Արևելեան կողմում
տարածւած է Ուչ-թափալարի սարահարթը, որն այդ
ուղղութեամբ աստիճանաբար բարձրանում և Սիսիա-
նի բնական սահմանը հասցնում է մինչև Եան-թափա,
7,519'. Շիշ-թափա, 7,327' և Ուլու-թափա, 6,698':

Սիսիանի լեռները չունեն հանքային այն առատ

հարստութիւնը, որով նշանաւոր են Զանգեզուրի դաւառի մնացած մասերը. բայց և բոլորովին զուրկ էլ չեն դրանից. այսպէս օրինակ՝ արծաթի և արճճի հետքեր կան Մազրա գիւղի շրջակայքում. պղնձահանքի հետքեր նկատւած են Մազրա, Շնաթաղ, Շիւքար և Ալիշար գիւղերի մօտ. քարածուխի հանք կայ Շիւքարի մօտ: գտնւած Գէօյ-Բուլաղ կոչւած ձորակում և կաւահանք՝ Բազարչայում:

Վերոյիշեալ հանքերը չեն շահագործուում, եթէ ինկատի չառնենք Բազարչայի բրուտարանը (կաւամանւների գործարանը) և այն մի քանի սայլ քարածուխշ, որ տարէնը մի քանի անգամ տանում են վերոյիշեալ գիւղացիք Շիւքարու ածխահանքից:

Ջրերի կողմից բաւականին առատ է Սիսիանը. Շարուր-Դարայազեաղի լեռներից սկիզբն առնելով Որոտանը և ամբողջ երկիրը համարեա թէ երկու համահաւասար մասի բաժանելով՝ բաւականին հանգիստ հոսանքով անցնում է նրա սահմանից. աջ կողմից նրա մէջ թափւում են Շնաթաղի, Ուզի՝ որի վտակներն են Այրի-չայ, Ուլու-չայ, Դալի-չայ և Արիքլուի գետերը. ձախից՝ Բուղուր-չայ, Ղալաջի և Շաքի գետերը:

Սիսիանի ջրերում պատահում են երկու տեսակ ձկներ. կապոյտ ձուկն և կարմրախայտը. վերջինս՝ որ լաւ գին ունի տեղացիների աչքում, պատահում է միայն Որոտանի վերին հոսանքներում և նրա վտակներում: Բազարչայի դուխաբորներն են դարձեալ, որ բաւականին մեծ քանակութեամբ, նամանաւանդ տօն օրերին, կարմրախայտ են արտահանում մերձակայ գիւղերը և Գօրիսի շուկան. իսկ բնիկները թէև ձըկնորսութեամբ պարապում են, բայց միայն իրանց անտեսութեան մէջ գործազրկու գիտաւորութեամբ:

Հանքային ջրերը ևս խորթ չեն Սիսիանին: Հանքային ջրի մի բարակ ակն կայ Տուլորս գիւղի մօտ, որին տեղացիները «ջօր-ջուր» են անւանում. ապա ածխաթթ-

ւով հարուստ մի քանի սկներ էլ կան Սիսիան, Ալիսիսիան և Դաստակէյտ գիւղերի մերձակայքում. այդ ջրերին էլ ժողովուրդը «գիւտրակի» է անւանում ու շատ օգտակար համարում մարսողութեան համար, թէև իրանք չեն գործածում. ծծմբային—տաք ջրի մի բաւականին ուժեղ ակն էլ կայ Մուխուր-թօլեան լեռան լանջին, որը նոյնպէս չէ շահագործուում:

Կլիմայական տեսակէտից ամբողջ Սիսիանը, որի բարձրութիւնը հասնում է 5,000՝ մինչև 11,000՝-ի, կարելի է բաժանել 3 մասի: Ելլաղների շրջան, որը տարւայ մեծ մասը ծածկւած է լինում ձիւնով և ամառային տաք ամիսներում միայն կանաչելով՝ ծառայում է իրրև արօտատեղիներ: Ելլաղների շրջանի հողերի մեծ մասը պատկանում է քուչուրներին, որոնք գալիս են շատ հեռու՝ մինչև անգամ Կասպից ծովի ափերին մօտ գտնուող, վայրերից: Բնիկ սիսիանցիների ձեռքում այդ հողերի միայն շատ քիչ մասն է գտնւում և բացառապէս իրրև արօտատեղիներ են ծառայում:

Կենտրոնական Սիսիանի շրջան. այս շրջանի բոլոր հողերը գտնւում են նստակեացների ձեռքի տակ և սրանք են կազմում գլխաւորապէս սիսիանցու ապրուստի աղբիւրը. այստեղ կլիման համեմատաբար աւելի տաք է ու այդ պատճառով էլ յարմար հացահատիկների մշակման համար: Վերջապէս հովտի շրջան, որտեղ արդէն հնաբաւոր է մրգատու ծառերի մշակումը և նոյնիսկ նրա ներքին մասերում հանդիսատես ենք լինում այգիները—որտեղ բնում են թութն ու ծիրանը, թէև շատ ուշ, յունիսի վերջերին ու յուլիսի ըսկզբներին են հասունանում:

Ընդհանրապէս վերցրած, Սիսիանի կլիման ցուրտ է և բոյսերի շատ սահմանափակ տեսակներ են, որոնք կարող են այդտեղ աճել. այստեղի և ոչ մի կէտում չէք հանդիպի ամառային այն աօթերին, որոնք յատուկ են Զանգեզուրի հարթութիւններին իրանց

հոչակաւոր մոծակներով. բայց չնայած դրան, ամառային ամիսներում եղանակները բաւականին տաք ու չոր են լինում, որի պատճառով էլ երբեմն 6,000-ից էլ աւելի բարձրութիւնների վրայ աճած բոյսերը, արհեստական ոռոգման կարիքն են դդում:

Այսպիսով՝ Սիսիանի բնական հարստութիւնները, հանքերն ու հանքային ջրերը չեն շահագործւում. կլիմայական աննպաստ պայմանների շնորհիւ՝ ազգաբնակչութիւնը անկարող է շօշափելի չափերով այգեգործութեամբ զբաղել, որի համար նա անպայման շատ ժամանակ ունի և գրանցով իրա համար տնտեսական շահի աղբիւր ստեղծել. անտառների կատարեալ բացակայութեան պատճառով, այդ սասպարիդին յատուկ արդիւնքի աղբիւրների դռները ևս փակ են նրանց առաջ. ուրեմն միայն հողագործութիւնն ու անասնապահութիւնն է մնում, որ և իսկապէս Սիսիանի ժողովրդի անտեսութեան հիմնաքարն է կազմում:

Այժմ տեսնենք սիսիանցու ապաւինած տնտեսութեան այդ երկու ճիւղերը ի՞նչ ծաւալ ունեն և զարգացման ո՞ր աստիճանի վրայ են գտնւում:

✓ Ինչպէս յիշեցի, Սիսիանի ամբողջ տարածութիւնը համարւմ է մօտ 185,765 դեսեատինի, այդ տարածութեան մի երրորդականից աւելի մասը պատկանում է քոչւորներին. մօտ մի երրորդ մասն էլ ծածկւած է ժայռերով, ապառաժներով, մացառներով, ջրերի առաքաններով և շէնատեղերով. ու իրապէս, այդ լայնածաւալ ու ընդարձակ երկրից, բուն Սիսիանի նստակեաց ժողովրդի ձեռքի տակ գտնւում է 45,730 դեսեատին հող, որից՝

32,854 դեսեատինը կամ 71,8% -ը արքունի է
 10,316 » կամ 22,5% քեղական կամ վանական է
 2,560 » » 5,5% մասնաւոր սեփականութիւն է
 էթէ վերջին կարգի, այն է՝ մասնաւոր սեփականութիւն ճանաչուող հողերն էլ մի կողմը նետենք, կստա-

նանք 43,170 դեսեատին, որն և գտնւում է Սիսիանի գիւղական համայնքների տրամադրութեան տակ:

Սակայն դեռ հողի տարածութիւնը, ինքն իրեն, առանց ազգաբնակչութեան քանակի հետ ծանօթանալու, ոչինչ չէ կարող պարզել մեզ համար:

Սիսիանի ամբողջ ազգաբնակչութեան թիւը հասնում է 35,575-ի, որից կազմում են /

հայերը՝	51,9	տոկոսը կամ	18,470	շունչ
թուրքերը՝	45,8	»	»	16,320
սեկտանտները՝	2,2	»	»	785

Թուրքերի մեծամասնութիւնը, թւով 14,145 հոգի, շիաներ են, իսկ մնացած 2,175 հոգին՝ սիւնիներ: Թուրքերի բնակավայրերը, ըստ ազանդի, որոշ տեքրիտօրիա չեն ներկայացնում, այլ խառը կերպով են ապրում. կայ և մի քանի գիւղեր, ուր հայ և թուրք միասին են ապրում:

Սեկտանտները քառասնական թւականներին զաղթել են Ղարաբաղից: Հայերի մեծամասնութիւնը ևս եկուորներ են, որոնք գաղթել են 1828—29 թւականներին, ուսուպարսկական պատերազմի ժամանակ, Քեարմալուից, Խօյից և Սայմաստից: Բնիկներ հաշւում են Բոնակոթի, Ալխաթեանի, Շնաթաղի ու Դարբասի գիւղացիները: Քեարմալուեցիները բնակուեցին Ալեւու, Անգեղակոթ, Թալա գիւղ և Ուղ գիւղօրայքում: Խօյեցիները՝ Պալաք, Մաղրա և Շաղաթ, իսկ Սալմաստցիները՝ Ղարաքիլիսա ու ապա Ղալաջ գիւղօրայքում: Ճիշտ է, վերոյիշեալ գիւղերում կային և բաւականաչափ բնիկներ, սակայն նրանք՝ իրանց թւական քնութեան պատճառով, կարճ ժամանակէլ ընթացքում կուլ գնացին, թէ իրանց սովորութիւններով, թէ բառարանով և թէ այլ առանձնայատկութիւններով—գաղթականներին:

Ամբողջ Սիսիանի շրջանում կայ 12 գիւղական հասարակութիւն 44 գիւղօրայքով, որոնցից 16-ը զուտ հայաբնակ գիւղեր են, 23 զուտ թրքաբնակ, 1-ը ոսա-

ընակ, իսկ մնացած 4-ում խառն կերպով ապրում են հայեր և թուրքեր:

Հայ գիւղօրայքը, ըստ ազգաբնակչութեան քանակի հետեւեալ պատկերն են ներկայացնում.

	Մասող ուսող ըն- տանիք	Աղական	Իբրական	Ընդհանուր	Աշխ. օտար. մէջ
1. Ղալաջղ	65	271	253	524	49
2. Անգեղակոթ	336	1183	1071	2254	256
3. Պալաք	69	224	200	424	60
4. Շաղաթ	214	743	643	1386	140
5. Մազրա	154	564	500	1064	141
6. Ալիու	130	446	419	865	103
7. Թագաղիւղ	105	279	270	549	83
8. Աղքենդ	68	272	281	553	50
9. Տուլորս	104	385	356	741	105
10. Բնունիս	64	263	223	486	38
11. Ալխաթիան	205	743	697	1440	192
12. Ուղ	223	812	670	1482	180
13. Ղարաքիլիսա	140	500	480	980	120
14. Բոնակոթ	402	1397	1274	2671	374
15. Շնաթաղ	97	512	469	981	159
16. Լօր	66	337	280	617	82
17. Գիտաթաղ	68	264	263	527	46
18. Դարաբաս	80	261	239	500	40
19. Լծէն	46	213	213	426	23
20. Շամբ *)					
"	2636	9669	8801	18470	2241

*) Այս գիւղի շնչերն հաշուել եմ Դարաբասի վրայ:

Ինչպէս տեսանք Սիսիանի զուտ գիւղական համայնքների տրամադրութեան տակ գտնուում է 42,170 զեսեատին, որից գտնուում է՝

հայերի մօտ 22,160 զես. կամ 51,3 տոկոսը
 թուրքերի մօտ 17,929 » » 41,5 »
 սեկտանտների մօտ 3,081 » » 7,1 »

այլապէս ասած, Սիսիանի տարբեր ազգութիւնները, միջին հաշուով հողային զաւարաութեան տեսակէտից հետեւեալ պատկերն ունեն. ամեն մի շնչին հայերի մօտ ընկնում է 1,2 զես., թուրքերի մօտ 1,1 զես., սեկտանտների մօտ 3,2 զես.: Եթէ ի նկատի ունենանք այն պարագան, որ Սիսիանում հայ գիւղօրայքը ընդհանուր առմամբ մի քիչ աւելի լեռնային մասերում են գտնուում, քան թրքականները և ընտանաբար նըրանց հողերն էլ մի քիչ աւելի արդիւնաւէտ են քան հայերինը, այն ժամանակ կարող ենք ասել, որ երկու ազգութիւնները, իրօք, համահաւասար չափով հող ունեն իրանց տրամադրութեան տակ: Բայց այդ միեւնոյնը չի կարելի տեսլ սեկտանտների նկատմամբ, որոնց հողերը ոչ միայն ապառաժոտներից ու մշակման համար խիստ դժւարին գառիվայրերից ու գարուվայրերից զուրկ ու միջակից բարձր պտղաբերութիւն ունեն, այլ և Սիսիանի ամենաարգաւանդ հողերի շարքերին են պատկանում. բայց չնայած դրան այսօր ամեն մի շունչ սեկտանտ 3,2 անգամ աւելի հող ունի իր ձեռքի տակ, քան հայերը և թուրքերը:

Սիսիանի հայ գիւղօրայքը՝ հողային բաւարարութեան և մշակման այլ և այլ ճիւղերի տեսակէտից հետեւեալ պատկերն են ներկայացնում:

Վարելահող	Մնջրդի		Բանջարանոց			Մ. յ. դ. ր.		Մ. ր. օ. ւ. ւ. ւ. ր.		Ը. ն. դ. ւ. ւ. ւ. ր.		
	Մնջրդի	Զրույի	Մ.	յ.	դ.	ր.	Մ.	ր.	օ.	ւ.	ւ.	ր.
1. Ղալաջղ	554	"	4	1	19	576	1154					
2. Սնգեղակոթ	2540	"	19	7	13	510	3089					
3. Պալաք	390	"	6	5	17	192	610					
4. Շաղաթ	885	141	8	"	"	275	1309					
5. Մազրա	1101	"	7	"	"	449	1557					
6. Ալեղու	1001	"	10	3	23	746	1783					
7. Թաղաղիւղ	778	"	7	"	"	100	885					
8. Աղբենդ	375	"	8	7	"	"	390					
9. Տուրբս	480	"	13	8	"	45	546					
10. Բնունիս	390	"	2	"	3	235	630					
11. Ալխաթիան	1031	"	5	4	13	621	1674					
12. Ուղ	867	144	15	5	"	261	1292					
13. Ղարաքիլիսա	1012	207	22	8	"	131	1380					
14. Բոնակոթ	2164	412	20	5	7	300	2953					
15. Շնաթաղ	657	"	6	2	20	1000	1685					
16. Լօր	200	"	6	3	1	120	357					
17. Գետաթաղ	118	"	7	1	5	104	244					
18. Դարարաս	236	"	6	1	2	100	354					
19. Լծէն	174	"	4	1	0	80	268					
20. Շամբ	"	"	"	"	"	"	"					
	14953	904	175	175	108	5845	22160					

Ուրեմն Սիսիանի 20 հայկական գիւղերի տրամադրութեան տակ կտնւող 22,160 դեսեստին տարածութեան ամբողջ (67,4%+4%) 71,4%-ը յատկացրած է հողագործութեան, 26% մշտական արօտներ են, իսկ մնացած շատ չնչին մասը՝ 2,6%-ը միայն բոնւած է այգիներով ու բանջարանոցներով: Վերոյիշեալից պարզ է, որ չնայած Սիսիանի լեռնային կլիմային, այնուամենայնիւ, նրա տնտեսութեան մէջ ամենաէական տեղը հողագործութիւնն է բռնում, այլապէս ասած, հացահատիկների մշակումը. իսկ երկրորդ և վերջին տեղը, եթէ ուշադրութեան չառնենք աննկատելի չափով սուաջ տարւող այգեգործութիւնը՝ անասնապահութիւնը:

Մեր առաջ բերած վիճակագրական տեղեկութիւններից երեւում է, որ մշտական արօտները, որոնք մի որեւէ երկրի անասնապահութեան առանձին գոյն և փայլ կարող են տալ, ամբողջ տարածութեան մօտ մի երրորդական մասն է կազմում. մի հանդամանք, որ անպայման մի մեծ պլլիւս է Սիսիանի գիւղերի համար:

Այժմ տեսնենք, թէ Սիսիանի հայ գիւղերը, ինչ չափով են կարողանում օգտւել իրանց հողերից, անասնապահութեան միջոցով:

ԿԵՆՊԱՆԻՆԵՐԸ

	Ձի արու	Մատակ	Ձ ու ի	է 2	Գ ու մ է 2	Կ ու Վ	Ե Պ	Ոչխար և սոճ	Անրողքը մեծատուս-րով
1. Ղալաջղ	29	17	"	23	1	111	163	305	397 ^{1,3}
2. Անգեղակոթ	19	98	"	432	32	538	862	915	2020
3. Պալաք	22	32	"	5	24	59	139	225	324 ^{1,3}
4. Շաղաթ	61	73	"	25	57	277	329	154	844 ^{1,4}
5. Մաղրա	89	20	"	4	21	214	290	550	746 ^{1,6}
6. Ալեւու	57	18	"	26	15	194	260	842	729 ^{1,7}
7. Թաղազիւղ	12	42	"	11	26	92	139	247	367 ^{1,7}
8. Աղքինդ	15	22	"	10	12	80	140	210	317 ^{1,6}
9. Տուլորս	36	19	"	24	28	170	260	500	629 ^{1,0}
10. Բնունիս	31	14	1	1	1	96	106	340	317 ^{1,3}
11. Ալխաթիան	73	24	1	4	31	194	320	438	733 ^{1,2}
12. Ուղ	36	65	"	161	46	206	403	725	1002 ^{1,3}
13. Ղարաքիլիս	52	43	"	26	50	168	216	185	523 ^{1,3}
14. Բունակոթ	174	14	"	8	41	296	716	1728	1621 ^{1,9}
15. Շնաթաղ	34	4	14	90	"	212	235	1100	779 ^{1,0}
16. Գեաթաղ	27	"	23	16	"	126	150	490	434 ^{1,6}
17. Լօր	25	2	"	27	"	50	88	297	242 ^{1,4}
18. Գարարաս	22	"	1	26	"	58	65	110	185 ^{1,3}
19. Լծէն	23	"	17	7	"	91	103	438	326 ^{1,2}
20. Շամբ	"	"	"	"	"	"	"	"	"
	837	537	57	926	379	3172	4984	9799	12542

Մեծատուար հաշուել եմ, ձին հաւասար է շորուն, ³/₂ էշին, գոմէշին, կովին, եղան և 5 ալան ոչխարի ու այծի:

Թէ ինչ ծաւալ ունի անասնապահութիւնը թուրքերի մօտ, այդ մասին վիճակագրական նորագոյն, նոյնիսկ ընդհանուր տեղեկութիւններ պակասում են. բայց մենք մօտաւոր չափով կարող ենք ասել, որ անասնապահութիւնը թուրքերի մօտ աւելի ընդարձակ չափերով է առաջ տարւում, քան հայերի: Այդ հանգամանքը նախ և առաջ պէտք է բացատրել թուրք ժողովրդի քաղաքակրթական յետամնացութեամբ, այն է, որ նրանք, ինչպէս բոլոր խաշնարած ժողովուրդները, իրանց նստակեցութեան առաջին շրջանում սերտ կերպով դեռ կապուած են մնում անասնապահութեան հետ և ապա, որ թուրքերը մօտիկ յարաբերութեան մէջ լինելով քոչւորներին հետ, ձմեռն իրանց անասուններին մի ստար մասը ուղարկում են ձմեռանոցները (դշլադները) ու այդպիսով ազատւում ձմեռային դժւար ամիսներում նրանց կերակրելու հոգսից:

Չնայած այս բոլորին, այնուամենայնիւ հայերի և թուրքերի մօտ անտեսութեան այդ երկու ճիւղերը, թէ իրանց ծաւալով և թէ արդիւնաբերութեան եղանակով միմիանցից շատ քիչ են տարբերւում: Սակայն բոլորովին մի բացառիկ ու ուրոյն տեղ է ընծում անասնապահութիւնը սեկտանտների մօտ. ունենալով ընդարձակ ու փարթամ արօտատեղիներ և ամեն տեսասակէտից օգտւելով կառավարութեան լայն հովանաւորութիւնից, Բագարչայում անասնապահութիւնը առաջ է տարւում խիստ լայն չափերով ու զարգացման նախանձելի աստիճանի վրայ է դնւում, որն օրինակելի կարելի է համարել ոչ միայն Սիսիանի, այլ և ամբողջ Չանգեզուր գաւառի նոյնիսկ ամբողջ Կովկասի համար: Անասնապահութիւնը իր բոլոր ճիւղերով այդտեղ համահաւասար չափով ծաղկած վիճակի մէջ է: Սերունդների ազնւացումը օրըստօրէ հսկայական յառաջդիմութիւն է ցոյց տալիս: Աղւազում տեղի ունի ոչ միայն Չանգեզուրի կամ Կովկասում եղած

այլ և այլ ցեղերի մէջ, այլ և շատ յաճախ տեղական ու միջին Ռուսաստանի և նոյն իսկ Եւրոպական երկրների ցեղերի մէջ. ու զարմանալու ոչինչ չկայ, երբ Սիսիանի և նրանց հետ միասին ամբողջ Ձանգեղուրի գիւղացիութիւնը շատ յաճախ է ստիպւած լինում Բազարչային ղիմելու լաւ լծկան կամ կթան կենդանիներ ձեռք բերելու համար:

Այժմ ի մի ամփոփենք մեր ունեցած բոլոր ստատիստիքական տեղեկութիւնները ու տեսնենք, թէ Սիսիանի հայ ազգաբնակչութեան իւրաքանչիւր մի շունչ ընդհանրապէս և ամէն մի գիւղական շունչ առանձնապէս, որքան է ապահովւած վարելահողով, կենդանիներով և հողով ընդհանրապէս. թէ ամէն մի կենդանու ի՞նչ քանակութեամբ արօտատեղի և ընդհանրապէս հող է բաժին ընկնում:

8

Գիւղերը	Ամեն մի շնչի վրայ ընկնում է			Ամէն մի մեծատաւարի վրայ ընկնում է	
	Կայտնական հող	Վարելահողի հող	Մեծատաւար	Վարելահողի հող	Մեծատաւար
Ղալաջղ	1,0	2,2	0,7	1,4	2,8
Անգեղակոթ	1,1	1,3	0,8	0,2	1,5
Պալաք	0,9	1,4	0,7	0,6	1,8
Շաղաթ	0,7	0,9	0,6	0,3	1,5
Մաղրա	1,0	1,1	0,7	0,6	2,0
Ալիլու	1,1	2,0	0,8	1 0	2,4
Թաղազիւղ	1,2	1,6	0,6	0,2	2,4
Աղքենդ	0,6	0,7	0,5	—	1,2
Տուրբս	0,6	0,7	0,8	—	0,8
Բնունիս	0,8	1,2	0,7	0,7	2,0
Ալխաթիան	0,7	1,1	0,5	0,8	2,2
Ուզ	0,6	0,8	0,6	0,2	1,2
Ղարաքիլիսա	1,1	1,4	0,5	0,2	2,2
Բոնակոթ	0,9	1,1	0,6	1,1	1,8
Շնաթաղ	0,6	1,7	1,7	1,7	2,1
Լօր	0,3	0,5	0,7	0,2	0,8
Գիտաթաղ	0,2	0,4	0,5	0,4	1,0
Դարարաս	0,4	0,6	0,3	0,5	1,3
Լծէն	0,4	0,6	0,7	0,2	0,8
Շամբ	”	”	”	”	”
Բոլոր գիւղերը միասին	0,8	1,2	0,6	0,4	1,8

Վերոյիշեալ թւերը, թէև մեզ որոշ ու համեմատական գաղափար տալիս են, սակայն մեր առաջ ընդորովին զեռ չեն մերկացնում սխիանցու տնտեսութեան ամբողջ էութիւնը. իսկ այդ նպատակին հասնելու համար, մեզ անհրաժեշտ է ծանօթանալ նրա արդիւնաբերութեան եղանակի հետ, կամ աւելի կարճ ու կտրուկ, թէ նա իտրիտուր իւր աշխատանքի, հողի արդիւնաբերող ոյժի և արդիւնաբերութեան մէջ մտցրած կապիտալի ի՞նչ արդիւնք է վերցնում:

Ինչպէս տեսանք Սիսիանի հայ գիւղերի անջրգի վարելահողերի տարածութիւնը հասնում է 14,593 զես. եռաշառան սիստեմի շնորհիւ ամեն տարի վարելահողերի մի երրորդական մասը խոպան է թողնուում ու միայն երկու երրորդական մասն է շահագործում, որ և հաւասար կլինի 9,968 զեստից: Միջին հաշուով իւրաքանչիւր մի գեստատինին սերմ ձգւում է 10 պուդ: Իմ հաւաքած բոլոր տեղեկութիւնները միաձայն վկայում են, որ արդիւնք վերցնում է ամենաշատը մէկին երեք. բայց ինկատի առնելով, որ վերջին տարիներում Սիսիանի բերքը միջակից աւելի ցածր է եղել—մէկին-երեք կարելի է միջին բերք համարել. այլապէս ասած, ամեն մի գեստատինից արդիւնք վերցնում է 30 պուդ, իսկ անջրգի վարելահողերի ամբողջ տարածութիւնից 299,058 պուդ հացահատիկ:

Ջրովի տարածութեան միայն մի հինգերորդական մասն է հացահատիկներով բոնւած. իսկ մնացած մասը յատկացրւած է կենդանական սննդարար բոյսերի մշակման. այստեղ արդէն արդիւնք ստացւում է միջին թւով մէկին ութ, որ և հաւասար կլինի 904 : 5. 10 . 8 հաւասար 14,464 պուդ հացահատիկ. ուրեմն հացահատիկների մշակումից ստացւում է ընդամէնը 313,526 պուդ:

Կենդանիների համար սննդատու բոյսերի մշակման շնորհիւ, զարիով միայն ձիաներն են կանոնաւորապէս կերակրւում, իսկ մատակներն և էջերն աննշան քանակութեամբ և կարճ ժամանակով: Այս հանգամանքը աչքի առաջ ունենալով, մենք բոլոր կարգի կենդանիների համար, միջին հաշուով ամեն մի ձիուն կարող ենք ձգել օրական 5 դրանքայ կամ տարեկան 45 պուդ. այս հաշուով անասունների վրայ (ազ. III) տարեկան դործադրւում է 45·837=33,665 պուդ հացահատիկ. հետևապէս սխիանցու մնացած կարիքները ծածկելու համար մնում է 319,526—33,665=285,861 պուդ հացահատիկ, կամ եթէ փողի վերածելու լինենք 285,861 բուրի, հաշւած բոլոր տեսակի ու կարգի հացահատիկների համար՝ պուդը մի բուրի:

Այժմ անցնենք անասնապահութեան. բեռնակիր, ինչպէս և լծկան կենդանիներից ստացած արդիւնքը կայանում է գլխաւորապէս նրանց աշխատանքի մէջ. իսկ այդ աշխատանքը համարեա թէ ամբողջովին կըլանում է սխիանցիների սեփական տնտեսութիւնը. սխիանցին զրանից միայն միջական արդիւնք է վերցնում, եթէ աչքաթող անենք այն երբեմնակի չնչին արդիւնքը, որպիսին նա վերցնում է «քրէհտարութիւնից»:

Անասնապահութիւնից ստացած արդիւնքն ևս չբաշխւում է ուշադրութեան աննել, քանի որ նա Սիսիանում հազիւ հազ կարողանում է մտացու ու սատկած կենդանիների բացը լրացնել: Համեմատութեան առնելով կովերի ու եզների քանակը, ժօտաւոր ճշտութեամբ կարող ենք ասել, որ իրրև մտացու գործադրւում է դրանց $\frac{1}{3}$ մասը=2134 գլուխ և տալիս է հետևեալ արդիւնքը. (այժմ)

2134 գլուխ տաւախից $\frac{1}{2}$ 16 պուդից $\frac{1}{2}$ 12,804 պուդ.
 à պուդը 2 բ. 50 $\frac{1}{2}$ 32,010 բուրի: Գառի $\frac{1}{2}$ 7 բուր.
 =14,938 բուրի:

1845
1804



Կովկասի միջին թևով ստացուում է տարեկան կաթ՝ 30 պուդ, որից պատրաստում են՝

1 պուդ իւղ, արժողութեամբ	12 ըուբլի
2 պուդ քաշած պանիր, »	4 »
5 պուդ թան, մածուց, կաթ և այլն,	2 »

Սյս հաշուով ամէն մի կովից տարեկան արդիւնք վերցնուում է 18 ըուբլի: Ենթադրելով որ գոմէշները կէս մասը ևս կթանենք են ու նրանք նոյն արդիւնքն են տալիս ինչ որ կովերը, կթան տաւարներից ստացած ամբողջ արդիւնքը հաւասար կլինի (տես ազ. III) 18.3551=63,918 ը.:

Մանրատաւարից ստացուում է. 4-ական ֆունտ կամ ընդամէնը 979,9 պուդ բուրդ. á պուդը 6 ըուբլի = 5879,4 ըուբլի: Տարեկան կէսական պուդ պանիր, á պուդը 3 ըուբլի = 14,697 ըուբլի. ընդունելով, որ մանրատաւարի 1/4 մասը ևս գործադրուում է իբրև մըսագու և հաշուելով իւրաքանչիւր մի գլխից 3 ըուբլի արդիւնք—ամբողջ եկամուտը հաւասար կլինի 9799 : 4 . 3 = 7340 ըուբլի:

Հաշի առնենք որ տարեկան ստակուում են բեռնակիր կենդանիների մի տասներորդական մասը և իբրև տնտեսական շահ մնում է նրանց կաշին՝ արժողութեամբ 5 ըուբլի = 1,728 ըուբլի:

Ուրեմն Սիսիանի 20 հայկական գիւղերը տարեկան արդիւնք վերցնում են՝

Վարելահոգերից	285,861	ըուբլի
Սյգիւններից	3,500	»
Մեծատաւարից՝ մսով,	32,010	»
» կաշուով,	14,338	»
» կաթով	63,918	»
Մանրատաւարից՝ բրդով,	5,879	»
» կաթով,	14,697	»
» մսով,	7,340	»
Բեռնակիր կենդանիներից,	1,728	»
	<u>429,099</u>	ըուբլի

Սյլապէս ամեն մի շնչի տարեկան արդիւնքը հաւասար է 429,099 : 18,470 = 23 ըուբլի 23 կոպէկ:

Սյժմ տեսնենք թէ ի դիմաց այդ մուտքի, ինչ ծախսերի կամ ելքի առաջ են կանգնած Սիսիանի 20 հայ գիւղօրայքը:—

Նրանք վճարում են՝

Պետական տուրք	15,105	ըուբլի
Բէդական ու վանական	3,539	»

Գիւղական և հասարակական այլ այլ տեսակի տուրքեր, իմ կազմած հաշուով իւրաքանչիւր մի մատող ուտող ընտանիք վճարում է տարեկան մօտ 3 ըուբլի = 7896 ըուբլի:

Ուրեմն ընդամէնը պետական, հասարակական և գիւղական տուրք վճարուում է տարեկան 26,540 ըուբ. կամ իւրաքանչիւր մի շունչ 1 ը. 43 կ.

Երկրորդ անհրաժեշտ ու ամենազգալի ելքը՝ հացի պաշարն է. իւրաքանչիւր մի գիւղական անձ, համաձայն 1906-7 թւականներից գոյութիւն ունեցող նպաստամատոյց յանձնաժողովի հաւաքած տեղեկութեան, ամսական սպառում է մէկ ու կէս պուդ հացահատիկ կամ տարեկան 18 պուդ: Սիսիանում իմ հաւաքած տեղեկութիւնները այդ հաշից մի երկու պուդ աւելի են ցոյց տալիս, որը զուցէ պէտք է բացատրել նրա առանձնայատուկ ընտանի պայմաններով. չնայած զըրան, ընդունենք նպաստամատոյց յանձնաժողովի հաւաքած տեղեկութիւնները Սիսիանի ազգաբնակչութեան համար ևս միջինը, որի համաձայն ամեն մի սիսիանցի տարեկան սպառում է 18 պուդ հացի պաշար, կամ ըստ մեր հաշի 18 ըուբլի:

Թէ որքան կաթնեղէն է գործադրում Սիսիանցի իւրաքանչիւր մի ընտանիք, այդ շատ տարբեր է ու կախած իւրաքանչիւր ընտանիքի ընտանեկան բարեկեցութիւնից. բայց մենք միջին հաշուով ամեն մի մատող ուտող ընտանիքի վրայ կարող ենք ձգել

առնւազը մի կողմի արդիւնք, ուրեմն համաձայն մեր հաշիւի—18րուրու, իսկ ամբողջ Սիսիանինը 40,112 ր., իսկ իւրաքանչիւր մի շնչինը 2 ր. 57 կ.:

Այսպիսով սիսիանցի ամեն մի շունչ՝ տուրքի, հացի և կաթնեղէնի համար միայն, գործադրուում է իւր ստացած արդիւնքից՝ 23 ր. 23կ-ից ամբողջը 22 ր. ուրեմն մի րուրի 23 կոպէկ է մնում նրա բազմակողմանի տնտեսութեան բազմաթիւ պահանջները ծածկելու համար. մի գումար, որը հազիւ նրա ոտնամաների տրեխների պահանջին կարողանայ բաւարարել:

Եւ եթէ անաւշադրութեան մատնենք այն բոլոր ձախորդ հանգամանքները, ինչպէս օրինակ բնական պատահարները, բուսական և կենդանական հիւանդութիւնները, որոնց շատ յաճախ ենք մենք ակնատես լինում Սիսիանում և որոնք աւելի են խտացնում սիսիանացու տնտեսական քայքայման սլոցիսի գունաւորումը, մեր առաջ բերած փոստերը միանգամայն բաւական են մեզ համար հասկանալու, թէ ինչու Սիսիանի հայ ազգաբնակչութեան ամբողջ 12 ասիօսը փոխել է իր քաղցը յուշերով լի հայրենիքի հպարտ լեռների սիւզաւէտ գաղաթիւները—Բալախանու կեղտ ու մրի հետ:

* * *

Հողագործութեան ոգին կենդանական աղբն է. նրա միջոցով է միայն, որ հնարաւորութիւն ունենք երկրիս կեղևի մէջ ամբարւած նիւթերը լայն չափերով շահագործման ենթարկելու: Ծիշտ է, արհեստական պարարտացման նիւթերն ևս իրանց հերթին նպաստում են այդ գործողութեան, բայց այն արդիւնաւէտութիւնը ունենալ, ինչ որ բնական պարարտացման նիւթերն են, անկարող են. զրա համար է, որ նա անփոխարինելի մի գանձ է գիւղատնտեսութեան համար. զրա համար է, որ ամեն մի արմատական տնտեսութեան մէջ անսանադատութիւնը անբակտելի կապերով զուգորդւած է հողագործութեան հետ. սուանց պարարտացման նիւթերի հողագործութիւնը մի աղետաւոր ժամանց է քսաներբորդ դարի շեմքում:

Սիսիանում, անտառների կատարեալ բացակայութեան պատճառով, ոչ միայն գոմերի, այլ և արօտատեղիներում թափւած կենդանական աղբը մեծ խնամքով հաւաքուում և գործադրուում է իբրև վառելիք. պարարտացում՝ բառիս ամենաթեթեւ իմաստով անզամ վերցրած, բացարձակօրէն գոյութիւն չունի այդ գաւառակում. և տասնեակ տարիների ու դարերի ընթացքում Սիսիանցին՝ առանց արագացի մասին մտածելու, անընդհատ սպառել է երկրի արդիւնաբերող ոյժը և իր տնտեսութիւնը հասցրել մի այնօրինակ ողորմելի դրութեան, որ ինքը երկրագործ ժողովուրդ լինելով հանդերձ անհրաժեշտ հացի պաշարը ստիպւած է դրսից հայթհայթել:

Իրաւ է. մեր երկրի գիւղացիութեան մի չնչին մասի մօտ միայն գոյութիւն ունի պարարտացում. բայց այդ բացը ամենից առաջ զգալի է լեռնային գօտիներում, որտեղ հողային շերտը շատ բարակ է ու այն էլ կաւային, կլիման ցուրտ է և ձմեռը երկարատե ինչպէս Սիսիանում:

Բայց չնայած դրան, չնայած տարիների դառն փորձերին, սիսիանցին այսօր էլ դարձեալ անկարող է պարարտացման զիմել, առանց իր տնտեսութեան համար նոյնքան կարևոր նշանակութիւն ունեցող վառելանութեթի մասին մտածելու: Մերձակայ սահմաններում ևս անտառներ բացակայում են. իսկ կանոնաւոր հողորդակցութեան չգոյութեան պատճառով նա հնարաւորութիւնից զուրկ է իրա այդ պակասը շատ հոու տեղերից լրացնել, որի համար էլ ստիպւած առաջ է տանում նախնիքներից ժառանգութիւն մնացած տնտեսութեան՝ թէև աւերիչ կղանակը:

Սակայն կայ մի հանգամանք, որը արժանի է խորին ուշադրութեան և որը մեր կարծիքով կարող է մեծ յեղաշրջում մտցնել սիսիացու տնտեսութեան մէջ. այդ՝ Շիւքարի մօտ գտնւած Գիօյ-Բուլայ կոչւած ձո-

րակի ածխահանքն է: Թէ ինչ քանակութեամբ կարելի է քարածուխ արտահանել և ինչ չափով նա կարող է բաւարարել սիսիանցու պահանջներն, այդ արդէն մասնագէտ ինժինեըները գործն է. բայց որ այդտեղ ածխահանք կայ և որը կարելի է իբրև վառելիք գործադրել—այդ արդէն կասկածից դուրս է, քանի որ սեկտանտները, հէնց սիսիանցիները աչքի առաջ, ամբողջ քսան վերստ տարածութիւն կտրելով, քարածուխ են տեղափոխում Բազարչայ, կաւամանների գործարանի համար:

Տնտեսական տեսակէտից անհնարութեան սահմանները մէջ չէ, ի հարկ է, և այլ տեսակի վառելանիւթերի գործածութիւնը, եթէ սիսիանցիք իրազեկ լինէին պարարտացման գործին և եթէ հաղորդակցութեան պայմանները փոքր ինչ դիւրացնէին. բայց այնուամենայնիւ յար ու նման բոլոր միջոցները անկարող պիտի լինեն սիսիանցու տնտեսութիւնն այն բարձրութեան հասցնելու, որպիսի աստիճանի նա կ'հասնի ածխահանքի մշակման ղէպըում: Ածխահանքի արդիւնաբերութիւնը ոչ միայն կարող է կերպարանափոխել գիւղատնտեսութեան վիճակը, այլ և նրա միջոցով է միայն հնարաւոր, գոնէ մօտիկ ապագայում, շահագործման ենթարկելու Սիսիանի հանքերը. մի հանգամանք, որ էական նշանակութիւն պիտի ունենայ այդ երկրի թէ տնտեսական և թէ քաղաքակրթական յառաջադիմութեան համար:

Հողագործութեան արդիւնաւէտութեան գործում արհեստական պարարտացման նիւթերն ևս որոշ չափով կարող էին բնական պարարտացման նիւթերին փոխարինել, եթէ միայն, ինչպէս վերև յիշեցինք, Սիսիանը ունենար կանոնաւոր ձանապարհներ ու մօտ լինէր երկաթուղային կայարաններին, կամ թէ չէ, հէնց Զանգեզուրի սահմանների մէջ արտահանւէին այդ տեսակի նիւթեր. բայց քանի որ ոչ առաջի յար-

մարութիւնը գոյութիւն ունի Սիսիանում և ոչ էլ երկրորդը, ապա ուրեմն արհեստական պարարտացման նիւթերի գործադրութիւնն էլ նոյնքան դժւարութիւնների հետ է կապւած, որքան և այլ վառելանիւթերինը:

Կայ պարարտացման մի եղանակ միայն, որ գործադրում է Սիսիանում, թէև շատ չնչին չափերով. այդ բերքափոփոխ տնտեսութիւնն է: Հաշւետուութեան ժամանակ յիշեցինք, որ ջրովի տարածութեան միայն $\frac{1}{5}$ մասն է հացահատիկներով ծածկւած, իսկ ֆնացած մասը յատկացրած է կենդանիների համար սննդարար բոյսերի մշակման: Կենդանիների սննդարար բոյսերից Սիսիանում ցանում են եօնջա (Medicago Sativa) և կորնգանի (Onobrychis Sativa): Ինչպէս յայտնի է եօնջայի տեսակները, կորնգանին, կամ ընդհանրապէս բոլոր թիթեռնակերպ բոյսերը կարողանում են օգտւել օդի մէջ լայն չափերով տարածւած բորակածնից, որի համար և կոչւում են բորակածին հաւաքողներ. մի տարր, մի նիւթ, որով հողը ամենայաճախ ղէպքերում աղքատ է լինում: Ահա հէնց այդ իսկ պատճառով է, որ եօնջայից կամ կորնգանուց յետոյ հացահատիկներ ցանելուց, սիսիանցիք ստանում են ոչ թէ 1-ին 2, 3, 4, այլ 8, 10 և դեռ էլ աւելի: Բերքափոփոխութիւնը տեղի է ունենում հետեւալ կարգով, եօնջա 7 տարի կամ կորնգանի 4 տարի, կտաւատ 1 տարի, հաճար 1 տարի. ցորեն 2 տարի: Սիսիանցիք շատ լաւ նկատում են վերոյիշեալ բոյսերի հողի վրայ թողած բարերար ազդեցութիւնը, սակայն նրանք իրանց այդ ծանօթութիւնից շատ քիչ են օգտւում, շնորհիւ թէ այդտեղ և թէ ընդհանրապէս մեր հայրենիքում տարածւած այն ընդհանուր կարծիքի, որ եօնջա և կորնգանի, ինչպէս և սրանց տեսակին պատկանող այլ բոյսերը, կարելի է ցանել միայն ջրովի տեղերում. այդ գիւղատնտեսագիտական մի թիւրիմացութիւն է, որ պէտք է ուղղել:

Ջրաբերի տեղերում ցանաձմ մանդարար բոյսերով
և խոտերի տեսակները անկասկած աւելի հունձ ու
բերք են տալիս քան անձրդի տեղերում. բայց եթէ
մենք մի կողմը թողնենք դաշտավայրերը, որտեղ տա-
քութեան պատճառով առանց ջրի համարեա թէ ոչինչ
չէ բնուում, պէտք է ընդունենք, որ շուրք լեռնոտ եր-
կրներում ցանկալի է, բայց ոչ անհրաժեշտ. այդ մի
ճշմարտութիւն է, նամանաւանդ այն տեղերի համար,
որոնք դանւում են 5000, և դեռ էլ աւելի բարձր ծովի
մակերևոյթից, ինչպէս ամբողջ Սիսիանն է:

Եօնջան կամ ընդհանրապէս այդ բնտանիքին
պատկանող բոլոր բոյսերը, շնորիւ իրանց գետնի մէջ
խիստ խորը գնացող արմատների, անձրդի տեղերումնս
ուժեղ ու փարթամ կարող են աճել, քան ուրիշ շատ և
շատ բոյսերի տեսակներ, որոնցով սովորաբար ծածկւած
է լինում այդ տարածութիւնը: Ուսողման կարիք գուցէ
նրանք զգան առաջին տարին, այն էլ այն ժամանակ,
երբ եղանակները երաշտային լինեն. հէնց այդ պատ-
ճառով էլ անհրաժեշտ է ընտրել երկրի զէպի հիւսիսա-
յին կողմը ընկած խոնաւ լանջերը, այսինքն այն տե-
սակ տեղեր ուր հացահատիկները սովորաբար խեղդ-
ւում են որոմներով կամ ցրտի պատճառով դժւարու-
թեամբ են աճում. իսկ այդ տեսակ յարմար վայրերով
շատ հարուստ է Սիսիանը:

Այսպիսով սիսիանցիք հնարաւորութիւն կունենան
լայն չափերով իրանց երկրի մէջ բերքափոփոխ
տնտեսութիւնը մտցնել և զբանով մասամբ առաջն
առած կ'լինին հողերի յօգնածութեան, որը ա-
ռաջ է հիկել հացահատիկները միատեսակ մշակութիւ-
նից: Ծիշտ է, այս զէպըում Սիսիանի հողերի մի զգա-
լի մասը մշտապէս ծածկւած կ'մնայ մանդարար բոյսե-
րով, բայց այդ հանգամանքը չըպէտք է խրտնացնի սի-
սիանցիներին, որովհետեւ նախ Սիսիանը մի երկիր է,
ուր ամենից առաջ անասնապահութիւնը կարող է լայն

չափերով ծաւալել և երկրորդ նրանք տնտեսութեան
այդ եղանակով աւելի շատ հացահատիկ կստանան
իրանց հողերից:

Այժմ անցնենք հողի մշակման, որը պարարտա-
ցումից պակաս նշանակութիւն չունի հողագործութեան
համար:

Այսօրւայ հողի մշակումը մի գիտութիւն է. հո-
ղը մշակել, այդ դեռ չի նշանակում գետնի տակից
նոր հող հանել և հինը թաղել, ինչպէս կարծում են
սովորաբար մեր գիւղացիք. այլ այդ պարագան նրա
նպատակներից մէկն է միայն: Ոչ աւելի պակաս
էական նշանակութիւն ունի հողի մանրեւն ու փափ-
կացնելը, խոռնելն ու մակերևոյթի ամրացնելը. և վեր-
ջապէս հողի մշակումն ունի իր բազմազան ձևերը
յարմար իւրաքանչիւր մի բոյսի և դրան էլ համապա-
տասխան մեքենաներ. բացի զբանից միևնոյն աշխա-
տանքները տարբեր հողերում տարբեր կազմութեան
մեքենաներով է առաջ տարւում: Սիսիանում բոլոր
կարգի հողերի և բոլոր տեսակ բոյսերի համար հերքե-
լու միակ գործիքը «վեսկին» կամ «կոէ» գութանն է.
այդ միևնոյն գործիքով նրանք վարում են հողերի բո-
լոր տեսակները, լինի նա կարծր թէ փափուկ, խոնաւ
թէ չոր, քարքարոտ թէ քարազուրկ, լեռներում թէ
հովիտներում: Այդ աննպատակայարմութիւնը մենք
նկատում ենք և հողի մշակման մնացած գործիքների
վերաբերմամբ. այսպէս օրինակ, ցաքանն ու տափանը
ներկայումս նոյն են, ինչ որ սրանից տասնեակ տա-
նիներ ու զարեք առաջ, որոնք որ խիստ մեծ թերու-
թիւններով են իրագործում իրանց դերը. իսկ այն ինչ
ներկայումս զբանց կատարելագործւած տեսակները
կան, որոնք ոչ միայն նպատակայարմար կերպով են
առաջ տանում աշխատանքները, այլև զգալի չափերով
զիւրացնում ու արժանացնում են:

Մեր նպատակից դուրս է մի առ մի կանգ առնել

գիւղատնտեսական բոլոր գործիքների վրայ, որպիսին առաջադրում է մեզ արդի գիտութիւնն և ցոյց տալ նրանց առաւելութիւնները նահապետական գործիքների հետ համեմատութեան աննկով. այստեղ ես կցանկանայի միայն շեշտել, որ դրանք բոլորն էլ անծանօթ են սիսիանցուն, որ հողագործութեան վերաբերեալ մնացած գործիքներն ևս իրանց աննպատակայարմարութեամբ յետ չեն մնում հողը մշակելու գործիքներից, որ այսօր Սիսիանում, ինչպէս և ամբողջ Զանգեզուրում, բացարձակօրէն իշխում է կալն ու կամնը, մղանն ու եղանը, չինն ու մարանդուն, մանգաղն ու գերանդուն. և որ հնութեան մէջ ժանգոտւած այս գործիքները չէին կարող ներկայիս պահանջներին բաւարարել:

Առաջ բերենք մի երկու օրինակ միայն:

Բոյսերի փարթամ աճեցողութեան համար հողի մշակումից ու պարարտացումից էլ աւելի կարևոր նշանակութիւն ունի սերմի ընտրութիւնը. սերմի լաւութիւնը կայանում է նրանում, որ նա մաքուր լինի, ծանր ու խոշոր և ձկնու ընդունակ. այս յատկութիւններից մէկն ու մէկի պակասելու դէպքում մենք ոչ միայն անկարող կ'լինենք հողի արդիւնաբերող ոյժից օգտուել, ոչ միայն մեր ամբողջ աշխատանքը սպարդիւն կանցնի, այլ և մեր սերմացուն իզուր տեղը դէն շարտած կ'լինենք: Նորագոյն մեքենաները մեզ հնարաւորութիւն են տալիս այդ աւելորդ շտայութիւնից որոշ չափով խուսափելու. այն, միայն որոշ չափով. իսկ եթէ այդ այդպէս է, ապա ուրեմն խիստ հետաքրքրական է, թէ մեր գիւղացիք ընդհանրապէս և սիսիանցիք մասնաւորապէս իրանց թիերով, խախալներով ու շրտարարներով ինչ յաջողութեամբ են ընտրութիւն կատարում: Դժբախտաբար այդ առթիւ մեր երկրին վերաբերեալ ուսումնասիրութիւններ կատարելապէս բացակայում են. ծանօթ գիւղատնտեսներից, որոնք զբաղւել են այդ խնդրով, հաւաքած տեղիկութեանս համաձայն մեր

գիւղացիների սերմնացւի ամբողջ 40—50%—ը անօգուտ է անցնում. եթէ ընդունենք, որ վերոյիշեալ %—ը մի քիչ չափազանցրած է, յամենայն դէպս այդ՝ նոյն իսկ սիսիանցիների տւած տեղեկութեան համաձայն, հասնում է 20—30%-ի: Մարդուս մարմինը ցնցւում է, մազերը ցից—ցից են կանգնում, արիւնը սառում է երակների մէջ, երբ սկսում է մի փոքր ժամանակ հաշւի առնել այդ թւերը: Սիսիանցին՝ համաձայն մեր հաշւի, անջրդի տեղերում ցանում է 99,686 պուդ հացահատիկ, ջրարբի տեղերում 1,800 պուդ,—ընդամենը մօտ 100,000 պուդ սերմացու. հաշւելով 20—30%—ը, եթէ ոչ 50—ը, ուրեմն Սիսիանի քսան գիւղերը տարեկան սերմացւի միջոցով ուղղակի դէն են շարտւում 20—30,000 պուդ հացահատիկ. մի քանակ, մի գումար, որով կարելի է նոյն իսկ ամբողջ Զանգեզուրի ազգաբնակչութիւնը ապահովել սերմընտրող նորագոյն մեքենաներով:

Բազարչայում տասնեակ տարիներից ի վեր, իբրև հնձելու գործիք հարթավայրերում գտնւած արտերի համար, կիրառւում է գերանդուն. Սիսիանի թէ հայ և թէ թուրք ազգաբնակչութիւնը մինչև օրս չկարողացաւ իւրացնել, իրեն խիստ մօտ գաննող հարևանից, աշխատանքի այդ նպատակայարմար գործիքի գործադրութիւնը և շատ հասկանալի պատճառներով: Հացահատիկներից՝ օրինակ, ցորենի արտերը պէտք է հնձել նրանց հասունութեան ղեղնութեան շրջանում. այսինքն այն ժամանակ, երբ հասկերի միջից հանած հատիկները այլևս կաթնոտ չեն, բայց ոչ էլ ամուր, այլ մոմանման, հեշտութեամբ և ուղիղ կտրւում են եղունգով և ցորենի ակոսի մօտ կանաչ մասնիկներ չեն նկատւում. այդպէս չէ ոչ միայն Սիսիանում, այլ և ամբողջ Զանգեզուրում. նրանք սովորաբար սպասում են մինչև հատիկների ամբանալը ու փխրունանալը. իսկ շատ դէպքերում, դեռ այդ շրջանից յետոյ

էլ արտերը օրերով մնում են առանց հնձելու. կարիք կայ միթէ բացատրելու, որ այդպիսով հացահատիկները ոչ միայն կորցնում են իրանց լուս յատկութիւնները, այլ և գիւղացիք անտեսական հազդին կորուստ են ունենում. այստեղ ոչ միայն գերանդուն, այլ հնձելու ամենանորագոյն մեքենաներն անզամ անկարող կլինեն իրանց աշխատանքներն առաջ տանել, առանց հասկերը հատկաթափ անելու, որպիսի աուսրկութիւն անում են սիսիանցիք գերանդւի վերաբերմամբ:

Բայց կորուստը դեռ դրանով չէ վերջանում. քամին մի կողմից է դատարկում հասկերը, բեռնակիր կինդանինները միւս կողմից և վերջապէս բաւական է մի ուժեղ անձրեւ, որ ամբողջ տարւայ այդ աշխատանքը մի ակնթարթում թռչունների կերակուր դառնայ: Ահա թէ ինչու ամառային ամիսները մեր գիւղացիների համար ահ ու դողի ամիսներ են:

Եւ քանի որ պատահական վեակին, նախնիքներից ժառանգութիւն մնացած ցաքանն ու տափանն առաջ կտանեն հողի մշակումը, քանի որ կալն ու կամներ հատկաթափ կանեն խուրձերը և քանի որ չինն ու մանգաղը կմնան հնձելու գործիքներ, մենք կարող կլինենք ասելու, որ սիսիանցու անտեսական պահանջներն օր օրի վրայ շատանում, իսկ աշխատանքի նպատակայարմարութեան տեմպը միևնոյնն է մնում:

Անցնենք անասնապահութեան: Մենք տեսանք, որ Սիսիանում ամեն մի մեծատաւարի վրայ գալիս է հող ընդհանրապէս 1,8 դեսեատին, այդ ասել կուզէ, որ իւրաքանչիւր 100 դեսեատինից սնոււմ են 55 մեծատաւար. եթէ համեմատութեան առնենք այս թիւը երոպական որև երկրի անասունների քանակի հետ. շատ անմխիթար եզրակացութեան կ'յանգենք. այսպէս օրինակ. իւրաքանչիւր 100 դեսեատին արօտ-վարելահողին գալիս է մեծատաւար՝ Աւարբիայում 59, Ֆրանսիայում 50, Գերմանիայում 86, իսկ Ամերիկայի միաց-

եալ նահանգներում նոյն իսկ 105. տարբերութիւնը, զոնէ Ֆրանսիայի և Աւստրիայի նկատմամբ մեծ չէր լինի, եթէ Եւրոպայի մեծատաւարը մեր մեծատաւարից 2—3 անգամ խոշոր չ'լինէր. այնտեղ մեծատաւարը հաշոււմ են հաւասար 12 ոչխարի, այծի, իսկ մեղ մօտ 5-ի:

Կամայ ակամայ մարդ տարակուսանքների մէջ է խորատուլում իմանալու, թէ ի՞նչն է պատճառը այդ հսկայական տարբերութեան և ինչ միջոցներով կարելի է մեր երկրի անասնապահութիւնը նոյնանման բարձրութեան հասցնել: Այդ ասպարիզում, անկասկած, սիսիանցիք դեռ Բազարչայի դուխարորներից շատ բան ունին սովորելու. բայց այդ դեռ բոլորը չէ:

Սիսիանի անասունների քուլթեան գլխաւոր պատճառներից մէկը անշուշտ այն հանգամանքի մէջ պէտք է որոնել, որ այդտեղ խոտերի տեսակների արհեստական ցանքսը շատ աննշան դեր է կատարում, շնորհիւ այն տարածած կարծիքի, ինչպէս յիշեցինք, որ խոտ կարելի է ցանել միայն ջրարբի վայրերում: Այդ կարծիքի թիւրութիւնը ցոյց տուող ամենապերճախօս ապացոյցներից մէկն էլ այն է, որ մեր արօտատեղիներում ու խոտահարներում ամենայն առատութեամբ բնոււմ են երեքնուկի, սարի եօնջայի (Trifolium), աւուոյտի, խնձորածաղկի կարմիր, սպիտակ, դեղին և վարդագոյն տեսակները, ցորնախոտը, ցորնուկը (Lolium), ոչխարախոտը, աղւեսախոտը և այլն և այլն: Այնտեղ, ուր այսօր հարոււմ է 80—150 պուղ խոտ, ամենայն համարձակութեամբ կարելի է ասել, որ մշակութեան, պարարտացման և ցանքսի շնորհիւ կարելի է ստանալ 2—300 պուղ, իսկ ջրովի տեղերում մինչև 1000 պուղ:

Սիսիանում տիրում է անտեսութեան եռգաշտեան սխտեմը, որի պատճառով միշտ երրորդ տարին հողը խոպան է թողնոււմ—հանդստանալու: Խոտա-

ցանքսերի շնորհիւ հնարաւոր է այդ տարին ևս չ'կորցնել, ստանալ երկու անգամ աւելի խոտ և միաժամանակ հողն էլ պարարտացնել բորակածնով: Սոտացանքսերի այս եղանակը առանձնապէս ձեռնաու է նրանով, որ աննշան աշխատանք է ահանջում. խոտերի սերմը ծլում է ցորենի և գարու հետ միաժամանակ, բայց մինչև հացահատիկների հնձելը մնում է ճնշած վիճակում. հնձից յետոյ միայն տրտերը սկսում են կանաչել, իսկ հետևեալ տարին արդէն հարւում են: Դիմելով խոտացանքսին, միևնոյն տեղից 2—3 անգամ աւելի խոտ ստանալով քան առաջ, հասկանալի է, որ սիսիանցին հնարաւորութիւն կունենայ այդ արդիւնքի համաձայն էլ իր անասունների քանակը աւելացնել:

Ինչպէս յայտնի է, իւրաքանչիւր երկիր ունի իր բնութեան և կլիմային յատուկ կենդանիները: Սիսիանը, ինչպէս տեսանք, մի բարձր ու լեռնոտ երկիր է. պէտք էր սպասել, որ սիսիանցին ընտանի կենդանիներ ընտրելիս առաւելութիւն կտար այն տեսակներին, որոնք յարմար են իր ծննդավայրի բնական պայմաններին և որոնցով նա կարող կլինէր երկրի հարստութիւնն աւելի շահագործել: Բայց այդ մենք չենք նկատում Սիսիանում: Ոչ մի կենդանի չէ կարող Սիսիանի լեռների այն խիստ թեք լանջերի, քարքարոտ ծերպերի արանքներում աճած խոտը այնպէս շահագործել, որքան ոչխարն ու այծը, բայց զժրախտաբար մենք տեսանք, որ այդ կենդանիները համեմատաբար շատ քիչ են: Նոյնը պէտք է ասել ջրիներին և էշերին նկատմամբ. այդ կենդանիները ոչ միայն ձիուց աւելի հեշտ կերպով կարող են իրանց սնունդը գտնել, այլ և նրանք աւելի դիմացկուն բեռնակիրներ են քան ձիերը, իսկ իրականութիւնը բոլորովին այլ բան է ցոյց տալիս:

Մի հանգամանք ևս. մեզ համար միանգամայն անհասկանալի է, թէ ինչպէս է, որ մի և նոյն բնական պայմաններն ունեցող հարևան գիւղերից մէկում կարող է էշերի քանակն այնքան մեծ լինել, ինչպէս օրի-

Անգեղակոթում, Ուլում, Դարաբասի ձորում, իսկ՝ մընացած գիւղերում այդ կենդանիները համարեա թէ գոյութիւն չունեն: Անկասկած է, որ առաջի գիւղացիների ընտրութիւնը նպատակայարմար է:

Նոյն թիւրիմացութեամբ պէտք է բացատրել և այն, որ գոմէշը՝ այդ խոնաւ, ճահճոտ, բայց և տաք երկրի կենդանին, յանկարծ Սիսիանի չոր ու ցուրտ լեռներն է բարձրացել:

Ահա, ընտանի կենդանիների այս աննպատակայարմար ընտրութիւնը ևս իր ազդեցութիւնն ունի Սիսիանի անասունների քնութեան վրայ:

Աւելի անմխիթար գրութեան մէջ է դառնում Սիսիանի անասնապահութիւնն ազնւացման տեսակէտից. կենդանիները տիրոջ նպատակի համաձայն որոշ ցեղերի չեն բաժանւած. ոչ միայն այդ, այլ և ամենահասարակ ընտրութիւն անգամ, գիւղերում եղած անասունների մէջ, որոնց դրական առաւելութիւնները յայտնի են, տեղի չէ ունենում: Այսօր էլ Սիսիանում նոյն լծկան հզան ու նոյն կթան կովի ցեղն է, ինչ որ սրանից տասնեակ տարիներ առաջ: Սիսիանցին իր այդ պակասը լրացնելու համար, ինչպէս տեղը յիշեցինք, դիմում է Բազարչային, առանց հաշի տակ ձգելու, որ այդ կենդանիները իրանց կարճատև կեանքի ընթացքում միայն կարող են օգտակար լինել և որ նրանցից առաջացած սերունդը նոյն է լինելու, ինչ որ իրանք արդէն ունին: Մենք չենք ասում, թէ և վատ չէր լինի, որ նա Ռուսաստանի և Մերոպայի երկրների այլ և այլ ցեղերին դիմի և իր երկիրն ու պահանջներին համապատասխան մետիւններ ստանայ. բայց նա ամենայն հեշտութեամբ կարող է մեր երկրում գտնւած ցեղերի մէջ նպատակայարմար ընտրութիւն կատարել:

Վերջապէս դիմելով կաթնատնտեսութեան, պէտք է նկատեմ, որ այդ ճիւղն ևս պակասաւոր կողմեր շատ ունի: Սիսիանում ստացող ինչպէս իւրը, նոյնպէս և պանիրն, իրանց կեղտոտութեան և որոշ համի բացակայութեան պատճառով, շուկայում շատ քիչ արժէք ունեն:

Սիսիանում իւզ ստանում են մածնից ինչպէս
յայտնի է, մածունը ածելով խնոցու մէջ ախքան են
հարում, մինչև որ իւզը բաժանուում է թանից. ապա
իւզի վրայ ազ անելով, պահում են մինչև հալելը:
Ստացւում է մի թանալից խառն համ ունեցող մթերք,
և եթէ սրա վրայ աւելացնենք, որ Սիսիանում ինչպէս
և ամբողջ Զանգեզուրում սովորութիւն չկայ տարբեր
կովերից ստացած կաթը տարբեր անօթներում պահելու
ու առանձին առանձին հարելու, խնոցու անյարմարու-
թեան պատճառով, այն ժամանակ մեզ համար հասկա-
նալի կլինի և նրա պակասաւոր յատկութիւնները:
Իսկ այդ բոլոր բացասական կողմերի առաջը մեծ
հեշտութեամբ կարելի է առնել սեպարատորներով. նա-
մանաւանդ որ զբանք թանգ չեն:

Բացի արագութիւնից, մաքրութիւնից սեպարա-
տորներով հնարաւորութիւն կայ սէրը մաքուր կերպով
բաժանել կաթից, ուրեմն և աւելի մեծ չափով կարագ
ստանալ, քան այդ կարելի է խնոցու միջոցով:

Պանիր ստանալու համար, ինչպէս յայտնի է,
պէտք է նոր կթած կամ քիչ տաքացրած կաթը մերել
որոշ բաղադրութեամբ «մերանով», որը ստացւում ենք
կաթնակեր հորթերի կամ գառների խախամից (չրդու-
նից) առանց ուրիշ որևէ այլ նիւթի օգնութեան դիմելու:

Սակայն ինչպէս կովկասում, այնպէս էլ Սիսիա-
նում խախամի վրայ աւելացնում են ազ, շիբ, չիբ, չամիչ,
ցոր, քացախ և ուրիշ հազար ու մի տեսակ բոյսեր ու
պտուղներ: Հնտեանքը այն է լինում, որ պանիրը չէ
մակարդւում այնպէս ինչպէս հարկաւոր է և զուրկ է
լինում մի հաստատուն ու որոշ համից:

Սիսիանցիները տնտեսութեան բազմաթիւ և
բազմապիսի պակասաւոր կողմերը, մեր այս հակիրճ
նկատողութիւններով չէ սպառւում և չեն էլ չարող
սպառել. կանգ առնել այդ բոլորի վրայ մեր ունե-
ցած հնարաւորութեան սահմաններից դուրս է:

Հայաստանի Ազգային գրադարան



NL0422139

13872

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Պահեստը՝ Բազու, «Сотрудникъ» գրափաճառանոցում: